6208

902.7
Z-28

1917

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

170

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ՍԿՍԱԾ 1914 Թ. ՄԻՆՉԵՒ 1917 Թ.

154 թ

370
Ջ316-ՏԵ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԷՊՕԽԱ» Մուզէյսկի պող. № 3.
1917

902.7
Հ-28

Շ-28

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ

† Նորին Վեհափառութիւն ՄԿՐՏԻՉ կաթողիկոս ամենայն Հայոց.
† Նորին Վեհափառ. ՄԱՏԹԷՈՍ Բ. կաթողիկոս ամենայն Հայոց.
Նորին Վեհափառութիւն ԳԷՈՐԳ. Ե. կաթողիկոս ամենայն Հայոց.

Պատուաւոր անդամներ

Ակադեմիկ Նիկողայոս Եակովլևիչ Մարը.
Աղէքսանդր Մելիք-Ազարեան.
Կոմսուհի Պրասկովիա Սերգեևնա Ուվարովա։

ԽՈՐՀՈՒՐԴ

Պատուոյ նախագահ Ալէքսանդր Մելիք Ազարեան։
Նախագահ՝ Համբարձում Մելիքեան։
Փոխ-նախագահ Հայկանոյշ Մարտիրոսեան։

Անդամներ՝ Վառվառէ Աղիխանեան, Միքայէլ Սրամեան, Ռուբէն Թադէոսեան, Կարապետ Խալաթեան, Մնացական Խունունց, Յովհաննէս Սպենդիարեան, Քրիստափոր Տէր Սարգսեան, Անդամ քարտուղար՝ Ե. Լալայեան։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Նախագահ՝ Երուանդ Լալայեան
Փոխ-նախագահ Առաքել Բաբախանեան։

Անդամներ՝ Աւետիք Եղեկեան, Միսակ Խոսրիկեան, Ռուբէն Մարտիրոսեան, Հայրապետ Մուսայէլեան, Հայկ Յովհաննիսեան, Մամբրէ Մատէոսեան, Վահան Տէր-Գրիգորեան։
Անդամ-քարտուղար՝ Լևոն Մելիքսէթբէգեան։

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Ս. Խարազեան, Զ. Մամուլեան, Ա. Յովհաննիսեան, Կ. Շիրինեան և Ս. Շիեան։

Ընկերութեան թանգարանը, գրադարանը և խմբագրատունը գտնւում են Թիֆլիսում, Լերմոնտովեան փողոցում. № 1.
Հասցէն.—Армянское Этнографическое Общ Тифлисъ.

370
Զ316-տե

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
ԻՄԱՆԱ. Մասնակցութեամբ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

2084

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Սկսած 1914 թ. մինչեւ 1917 թ.

Հայոց Ազգագրական Ընկերութիւնը 1914 թուից մինչև 1917 թ. սկիզբը, երեք տարուայ ընթացքում ունեցաւ հետևեալ գործունէութիւնը, միանգամայն ենթակայ համաշխարհային պատերազմի յարուցած չափազանց աննպաստ պայմաններին.

Հոյս ընծայեց հետեւեալ հրատարակութիւնները.

ա. Ազգագրական հանդէս. 25 և 26-րդ գրքեր.

բ. Մարգարիտներ հայ բանահիւսութեան Ե. Լալայեանի Բ. և Գ. գրքեր.

գ. Հայաստանի աշխարհագրութիւն. Տէր Յակոբեանի.

դ. Նիւթեր Հայ Մելիքութեան համար՝ Դոփեանք և Մելիք Շահնազարեաններ՝ Կարապետ եպիսկոպոսի.

ե. Ցուցակ Հայերէն ձեռագրաց Վասպուրականի Ե. Լալայեանի I պրակ։

Թղթի և տպագրութեան չափազանց թանգութեան պատճառով Ընկերութիւնը սահմանափակեց իւր հրատարակութիւնները և ոյժ տուեց գիտական խմբարշաւներին, գրադարանի և թանգարանի հարստացման։ Այսպէս՝ 1914 թուին Ե.Լալայեան երկու անգամ գնաց Վարդաշէն և Նիժ գիւղերը ու ամենայն մանրամասնութեամբ ուսումնասիրեց ուտիներին ազգագրական-պատմական աչսակէտից և միևնոյն ժամանակ կատարեց պեղումներ։

1915 թ. Ընկերութիւնը կազմակերպեց մի արշաւախումբ հինգ թիւրքահայ մտաւորականներից, որը 4 ամիս շարունակ այցելելով փախստականների ապաստանած վայրերը՝ Շնող, Աքորի, Ղարաքիլիսա, Ալէքսանդրապոլ, Երևան և Էջմիածին՝ հաւաքեց հայ բանահիւսութեան վերաբերեալ առատին նիւթ, մօտ 20,000 թերթ, որ կարող է կազմել 50 տուար հատոր։ Միմիայն հեքիաթների թիւը հասնում է 874-ի, բացի սրանից կայ նաև կենդանական վէպին վերաբերեալ բաւականաչափ նիւթ, (մօտ 2 հատորի) ժողովրդական երգեր և այլն։Այս խմբարշաւի ղեկավարութիւնը ձըրիաբար ստանձնեց Ե. Լալայեան, անդամները՝ որոշ ոռճկով՝ Նա-

զարէթ Տէր Մարտիրոսեան, Սենեքերիմ Շալճեան, Արտաշէս Բարսեղեան, Երուանդ Գէզազեան, և Շահէն Աբրահամեան։

Այս խմբարշաւի նիւթականը հոգալու համար ընկերութեան դիմումի համեմատ նպաստեցին Թիֆլիսի Նպաստամատոյց ընկերութիւնը և «Մշակի» խմբագրութիւնը, տալով հազարական ռուբլի։ Սակայն չորս ամսից յետոյ, երբ նիւթական միջոցները սպառուեցին, Ե. Լալայեան դիմել էր Ս. Էջմիածնի Եղբայրական օգնութեան յանձնաժողովի նախագահ Գ. Ծ. վ. Յովսէփեանին՝ խնդրելով նպաստել՝ արշաւախմբի գործունէութիւնը շարունակելու։ Հայր նախագահը խոստացել էր աջակցել և այս պատճառով Ե. Լալայեանը դիմել էր յանձնաժողովի միւս անդամներին, խնդրելով նրանց բարեհաճութիւնը, սակայն երբ Յանձնաժողովը յատկացրել էր 3000 ր. հայր Գարեգինը չէր կամեցել այդ գումարը յանձնել մեր ընկերութեան, այլ կազմել ճեմարանի ուսուցիչներից մի յանձնաժողով, այդ ուղղութեամբ աշխատելու, սակայն երբ ճեմարանի մանկավարժական ժողովը մերժել էր այդ առաջարկը, պատճառաբանելով, որ ուսուցիչներն ազատ չեն փախստականների ապաստանած վայրերն այցելելու և միևնոյն ժամանակ Ե. Լալայեանի արշաւախումբն արդէն այնքան նիւթ է հաւաքել, որ իրենք սկսելիս անշուշտ կրկնութիւնների մէջ պիտի ընկնեն, հայր Գարեգինը այնուամենայնիւ հրաւիրել էր մի քանի համախոհների և սրանց հետ կազմել մի Ազգագրական յանձնաժողով։ Երկար բանակցութիւններից յետոյ Ե. Լալայեանին յաջողուել էր մի հազար ռուբլի ստանալ այդ յանձնաժողովից և մի ամիս ևս շարունակել արշաւախմբի գործունէութիւնը։

Սակայն մի անգամ ևս ցանկանալով լրացնել այդ հաւաքածուն, խորհուրդը դիմեց Վեհափառ կաթուղիկոսին, խնդրելով երկու հազար ռուբլի յատկացնել դէպի Պարսկաստանի Սալմաստ և Խոյ գաւառները արշաւախումբ կազմակերպելու։ Եւ թէպէտ Նորին Վեհափառութիւնը մեծ համակրանքով վերաբերուեց դէպի այս խնդիրը, սակայն խնդրի որոշումը յանձնեց Եղբայրական օգնութեան յանձնաժողովին, որը առանց այլևայլութեան որոշեց տալ մեր ընկերութեան մի հազար ռուբլի և Էջմիածնի Ազգագրական յանձնաժողովին երկու հազար ռուբլի, չնայելով որ վերջինս գրաւոր խնդիր էլ չէր ներկայացրել, այլ միայն նախապատրաստել էր։ Ստանալով այս հազար ռուբլին՝ ընկերութիւնս անկարող գտնուեց դէպի Պարսկաստան խմբարշաւ կազմել և որոշեց շատանալ Ալէքսանդրապօլի շրջանում ապաստանած սասունցիներին ուսումնասիրելով։

Այսպէս ուրեմն, թէպէտ ընկերութիւնը չկարողացաւ լիովին հասնել իւր նպատակին՝ հաւաքել հայ բոլոր փախստականներից հայ բանահիւսութեան վերաբերեալ նիւթերը, սակայն մի մեծ գործ կատարեց, պատճառ դառնալով Էջմիածնում կազմակերպելու մի ազգագրական յանձնաժողով։ Այսպիսով նա հասաւ իւր այն նպատակին, որին տարիներ առաջ իզուր ձգտել էր, առաջարկելով բանալ Ազգագրական ընկերութեան ճիւղ և խումբ կազմել ուսումնասիրելու Էջմիածնի գաւառը, հոգ չէ, թէ այդ յանձնաժողովը փոխանակ նպաստելու և համերաշխ գործելու, խանգարեց մեր երկու արշաւախմբի գործունէութիւնը։

1916 թ. ամրանը ընկերութիւնը ցանկանում էր խմբարշաւ կազմել դէպի Մուշ, որի համար և Ե. Լալայեան ստացաւ Մոսկուայի Հնագիտական ընկերութիւնից արտօնութիւն պեղումներ կատարելու, այն պայմանով, որ պեղուած իրերը դառնան մեր ընկերութեան սեպհականութիւն, իսկ պեղումների նկարագրութիւնը տպագրուի նաև վերոյիշեալ ընկերութեան հրատարակութիւնների շարքում։ Սակայն նիւթականի սղութիւնը և մի քանի այլ հանգամանքներ արգելարիթ հանդիսացան և խմբարշաւը տեղի չունեցաւ։

Սրա փոխարէն կազմուեց մի ուրիշ արշաւախումբ Էջմիածնի գաւառի հնութիւններն ուսումնասիրելու և լուսանկարելու։ Այս նպատակի համար պ. Աստուածատուր Վաչեանը նուիրեց 700 ր. Տ. Մ. Ղամբարեանը՝ 200 ր. Մ. Փ. մի հարիւր ռուբլի և Տ. Միրզայեանը 50 ր.—Արշաւախումբը գործեց 2 ամիս և բազմաթիւ նիւթերի հետ բերեց նաև հինգ հարիւր լուսանկար վանքերի, օրնամենտների, տեսարանների և արձանագրութիւնների, ինչպէս նաև 60 հատ ժողովրդական երգեր, ֆոնոգրաֆով գրուած։

Ընկերութիւնը նաև ձեռնարկեց Ե. Լալայեանի ղեկավարութեամբ և մի խումբ հայ նկարիչների մասնակցութեամբ գունաւոր կերպով նկարել և մանրամասն նկարագրել հայերի զգեստները, զարդերն ու յարդարանքը, որի առաջին պրակը արդէն պատրաստ է տպագրութեան։

Թանգարան.—Խորհուրդը անհրաժեշտ համարելով կարելւոյն չափ շուտ կառուցանել ընկերութեան թանգարան-գրադարանի շէնքը, որի համար հողաբաժին տրամադրել էր Նորին Վեհափառութիւն Գէորգ Ե.ամենայն հայոց կաթուղիկոսը և հնգական հազար ռուբլի խոստացել էին նուիրել Տ. Հ. Մարտիրոսեան և պ. պ. Ա. Մելիք-Ազարեան ու Հ. Մելիքեան, խնդրեց բարձր. Բենիկ վարդապետին և Երուանդ Լալայեանին գնալ Բագու և թանգարանական շէնքի համար մեկենասներ գտնել։ Եւ սրանց խնդրով էլ խոստացան հնգական հազար ռուբլի նուիրել իբրև մի մի դահլիճի շինութեան վճար հետևեալ անձերը- Տ. Հռիփսիմէ Ադամեան, Տ. Ե. Սարգսեան և պ. Ա. Վաչեան, Արշակ Ղուկասեան, Նիկողայոս Առաքելեան։ Այնուհետև պ. Հ. Մելիքեանի և Ե. Լալայեանի խնդրով յանձն առան մի մի սենեակի ծախք 5000-ական ռուբլի նաև Տ։ Եւգենիա Սամուէլեան և պ. Պօղոս Յովսէփեան Ղուկասեաններ։

Միևնոյն ժամանակ կազմակերպուեց գաւառական Մասնաժողովներ, որոնցից իւրաքանչիւրն աշխատում է ձեռք բերել իւր գաւառի վերաբերեալ ազգագրական իրեր։ Այս մասնաժողովների ընդհանուր ղեկավարութիւնը յանձնուեց մի առանձին յանձնաժո-

զովի, որի անդամներն են՝Տ.Հ.Մարտիրոսեան(նախագահ),Տ. Վ. Ա-
լիխանեան (գանձապահ) և Տ. Հ. Լալայեան՝ անդամ-քարտուղար։

Այս գաւառական մասնաժողովները չբաւականացան միայն իրեր հաւաքելով. այլ և սկսեցին իրենց գաւառների աղգագրական երեկոյթներ կազմակերպել, որոնք մեծ ընդունելութիւն գտան հասարակութեան մէջ։

Թանգարանի համար ստացուած են հետևեալ նուէրները.

Տ. Վ. Ալիխանեանից՝ Ոգի Հայաստանի և Ս. Էջմիածին պատկերները, մի մատուցարան, մի ասեղնագործ բարձի երես, երկու մութաքի երես, մի հաւայիլ։ Տիկ. Ասլամազեանից 1 մանղալ։ Տ. Փ. Ասլանեանից մի ասեղնագործ թաշկինակ և ախալցխացի հայուհու մի անթարի։ Կոյս Փ. Աղաջանեանից 1 հլունագործ քիսա. մի նիզակ, 2 քլիշա։ Տ. Փ. Աստուածատրեանից 1 ոսկեթել ասեղնագործ բոխչա։ պ.Մ. Արամեանից շուշեցու հանդերձ, մի դաշոյն։Ա.Բարսեղեանից Լևոն թագաւորի արծաթէ դրամ։ Կոյս Ե. Բերութչեանից թիֆլիզեցու հանդերձի դոշլուղ և գօտիկ,3 էշօ (կլապիտոն հարթելու եղջիւր)։Կոյս Կ. Գուլուլեանից 1 հունլունքներով պորտմանէ և 5 պղնձէ դրամ. Տ. Թ. Գրիգորեանից մի բարձի երես։ Տ. Թ. Դիաթեանից մի իշլիկ։ Ս. Երիցեանից մի յախճապակէ ջրի աման և մի վառօղաման, Տ.Հ Եփրիկեանից մի փոքրիկ խուրջին։ Ա. Զարաւչից մի պղնձէ 1705 թ. շինած ափսէ։ Մայրապետ Հ.Թայիրեանից մի սափոր և մի կոնք, մի շիրմա, Ս. Էջմիածնի պատկերը, 1 հրովարտակ, 1 պատկեր և մի հին սկուտեղ։ Պ. Մ. Իւզբաշեանից շուշեցի կնոջ գլխի զարդարանքի արծաթէ 16 գնդիկներ, մի զոյգ քօշեր, մի զոյգ գուլպայ և մի զոյգ դօշլուղ։ Տ. Հ. Լալայեանից մի արծաթէ տուփ։ Տ. Ա. Խախանեանից թիֆլիզեցու մի գօտի։Պ. Յ, Կարանեանից մի քանդակազարդ քար։ Տ. Զիվանուց աշըղ Զիւանու ջութակը, մշեցու մի անթարի, մի փոքրիկ ձեռագործ թաշկինակ, մի ֆէս. մի արշին սաւահիր։ Աշըղ Զամալից իր գործածած սանթուրը։ Ս. Հախումեանից դրամներ՝ Լևոն թագաւորի, արծաթէ.Հեթումի, պղնձէ. պարսից Արշակունիների 8 արծաթէ, արաբական՝ 3 արծաթէ, բիւզանդական 2 ոսկի, 18 պղնձէ, զանազան ազգերի 35 պղնձէ, 4 արծ. ռուսական 6 արծ. 13 պղնձէ, և մի արաբական կնիք։Օր. Շ. Հասրաթեանից մի արախչին և մի աղաման։ Տ. Ա. Ղազանջեանից 1 անթարի և 1 կնունքի վերմակ։ Կոյս Հ. Ղոնեանից մի հին հարթուկ, մի խրխայ, մի անթարի, մի իշլիկ, մի շապիկ, մի վարդ, մի դէօշ, 1 զ. մետաքսէ գուլպա, 2 ճակատի աղլուխ։Պ Շ. Մալայեանից 6 բրոնզէ ապարանջան, 1 ասեղնագործ թաշկինակ, մի նշխարքի կնիք, Հեթում և Լևոն թագաւորների մի մի դրամ, մի համայիլ և մի կոնդակ, Տ Հ. Մաղաքեանից մի ասեղն. անձեռոցիկ։ Օր. Մատակեանից 1 զոյգ գուլպա, մի թիւթիւնի քիսա, մի ծխամուրճի գլուխ։ Տ. Ե. Մարգարեանից մի արծաթէ պորտմանէ, 6 արծաթէ և 2 պղնձէ դրամ։ Տ. Հ. Մարգարեանից մի ձեռագործ սփռոց։ Պ.Լ. Մարտիրոսեանից կովի վզի զարդեր։

Տ. Հ. Մարտիրոսեանից զարաբաղցի հայուհու մի տիկնիկ, 2 ասեղն. թաշկինակ։ Պ.Ռ.Մարտիրոսեանից 22 կտոր զանազան տեսակի զգեստներ և 10 կտոր կաւէ ամաններ։ Պ.Ն. Մարտիրոսեանից Միհրդատի պղնձէ 1 դրամ և հռովմէական մի արծաթէ դրամ։ Օր. Փ. Մելիքեանից 1 զոյգ բաղանիսի նալը։ Տ. Զ. Մեհրաբեանից Հայաստանի ասեղնագործ քարտէզը և «Ոգի Հայաստանի»ասեղնագործ պատկերը։Տ. Շ.Յակոբջանեանից մի ֆարֆորէ թանգագին խնկաման։ Տ. Ե. Յարութիւնեանից մի զոյգ թոզլուղ։ Տ. Վ. Յովհաննիսեանից մի խոնչայ 125 տարուայ։ Տ, Դ. Յովհաննիսեանից մի իշլիկ, մի շապիկ, 1 զ. գուլպա։ Տ. Վ. Նաղարէթեանից մի բոխչայ։ Տ. Տ. Սրորշչիկեանից մի օրօրոցի փորկապ և մի բարձերի փէշկիր։ Կոյս Ե. Վարդանեանից 4 ճակատի աղլուղ, 1 ասղի բարձ, 10 փիրփիրօ, 8 ուշիկ։ Տ. Մ. Տէր Աստուրեանից 5 պղնձէ դրամներ։ Օր. Մ. Տէր Աստուածատրեանից Լևոն թագ. արծ. մի դրամ։ Տ. Մ. Մարուքեանից բաղանիսի մետաքսէ փէշտրմալ մի զոյգ տոլաղ, 3 դաւլըչ, մի ճակատի աղլուղ, մի զոյգ երիզ։ Տ.Դ.Տէր Մինասեանից մի արծաթէ ղութիկ, վարդեջրի աման, թիւթիւնի քիսա։ Տ. Ն. Տէր Միրաքեանից 1 անթարի։ Տ. Շ. Տէր Միրաքեանից մի ձեռագիր Սիմէոն կաթողիկոսի արարեալ կտակ և քարոզ ի մեծի խաչելութեան։ Պ. Յ. Տէր Միրաքեանից բիւզանդական արծաթէ և 3 պղնձէ դրամներ։ Պ.Տ. Տիգրանեանից մի համայիլ, և արծաթէ դրամ։ Տ. Մ. Քաջազնունից մի իշլիկ և մի զ. գուլպա։

Գրադարան.—Ընկերութեան կովկասագիտական—մարդաբանական գրադարանը մինչև 1914 թ. ունէր 6900 կտոր գիրք, իսկ այժմ ունի 8395 գ., և շարունակում է ստանալ 54 պարբերական հրատարակութիւններ։ Գրադարանին արուած նուէրներից ուշագրաւ է Տ. Նատալիա Նունուֆարեանի նուէրը։ Յարգելի տիկինը նուիրեց միանուագ մի հազար բուբլի և խոստացաւ շարունակ տարեկան մի հարիւր բուբլի նուիրել՝ գրքեր գնելու ի յիշատակ իւր որդի՝ Գէորգի։ Այս գումարով գնուեց պ. Լէօի հարուստ գրադարանի մի մասը։

Երջանկայիշատակ Եսայի Թիւնիբէկեան իւր կենդանութեան ժամանակ խոստացել էր կարգադրել, որ իւր մահից յետոյ իւր ամբողջ գրադարանը նուիրեն մեր ընկերութեան։ Եւ յիրաւի, նրա ամուսին յարգելի տիկին Եղիսաբէթ Աբրահամեան Թիւնիբէկեանը նուիրեց մի պահարան և 193 կտոր գիրք։ Ստացուեց նաև Կ. Խալաթեանից մի ձեռագիր յայսմաւուրք, Ա. Բէկ-Յովսէփեանից—Ղարաբաղի Մելիք-Շահնազարեաններին վերաբերեալ վաւերաթղթեր՝ 53 թերթից բաղկացած և մի կնիք, Մ. ա. ք. Մելեանից Մատթէոս աւետարանի մեկնութեան ձեռագիր, Ա.Մելիք-Ազարեանից 10 կոնդակ, Տ Զ. Մեհրաբեանից դաշնակցութեան դատավարութեան ամբողջ գործը, Յ. Շահազիզ Կամսարականից պարսկական 2 ֆարման, Ս. Տէր Յակոբեանից 1 ձեռագիր բառարան XVII դարու, Տ. Կ. Փոնդոյեանից Յովսէփ Փոն-

գոյեանի ձեռագիրները։ Ընկերութիւնը նուէր ստացաւ նաև Պետրոգրադի գիտութեանց ճեմարանի մի շարք հրատարակութիւններ. ինչպէս «Византійскій временникъ» բոլոր գրքերը. «Христіанскій востокъ», «Извѣстія Академіи Наукъ», Պետրոգրադի Հնագիտական Ընկերութեան և Հնագիտական Յանձնաժողովի «Извѣстія»-ները և Մոսկուայի Հնագիտական ընկերութեան «Матеріалы по археологіи Кавказа».

Նաև ստացուել են

Ա. Արարատեանից 3 գիրք.
Դ. Աւան—Իւզբաշեանից Լինչի «Арменія».
Բժ. Ա. Բուդուղեանից 12 գ.
Կոյս Ե. Բերութչեանից 2 գ.
Գանձակի վիճակագրական ատեանից 5 գիրք.
Ե. ա. ք. Գեղամեանից 10 գ.
Ս. Գուլիշամբարեանից 11 գ.
Տ. Ն. Դոլուխանեանից «Մշակի» 1913 և 1914 թուակ.
Յ. Զոհրաբեանի ժառանգներից 7 գիրք.
Իշխ. Մ. Թումանեանից 8 գ.
Ե. Լալայեանից 35 գ.
Լէօից 3 գ.
Տ. Վ. Ծատուրեանից 60 գ.
Կ. և Յ. Կոստանեաններից 2 գ.
Տ. Մ. Ղարաջեանից 5 գիրք։
Կոյս Հ. Ղոնեանից Խաթաբալա 4 տարուայ, Մախլաս 1 տ. և 44 գիրք։
Կ. Մաղաքեանից 1665 թ. Իվոռնոում տպագրուած մի շաբակնոց
Լ. Մսերեանից «Փարոս», և «Փարոս Հայաստանի».
Յ. Զաթալբաշեանից 43 գ.
Տ. Մ. Աբեանից 1 գիրք.
Պ. Ամբրոսիոս Սբորչիկեանից 115 կոր գիրք.
Տ. Սակայեանից 70 կոր գ. ի յիշատակ իւր ամուսնու։
Մ. Սուլեանից 3 գ.
Տ. Ն. Վարդապետեանից «Մուրճ» 1901—6 թ.թ.
Տ. Մ. Տէր Աստուրեանից 2 գ.
Հ. Տէր Աստուածատրեանից 3 գ.
Ս. Տէր Յակոբեանից 14 գ.
Ք. Տէր Սարգսեանից 1 գ.
Ն. Մարրից 4 գ.
Տ. Հ. Մարտիրոսեանից 132 գ.
Մ. Մեբուրնութեանից 92 գ.
Տ. Վ. Մելեանից 56 գիրք
Լ. Մելիք Ադամեանից 8 գ.
Տ. Թ. Միրզայեանից 53 գ.
Մ. Միրզայեանից 11 գ.
Լ. Քալանթարից 3 գ.
Գ. Քալանթարեանից 40 գ.
Վ. Քանանեանից 6 գ.
Քուչուկ Յովհաննիսեանից 5 գ.
Մ. Քիւրքչեանից Աստուածաշունչ 1733 թ. տպագր.
Տ. Կ. Փոնդոյեանից 58 գ.

Դասախօսութիւններ.—Խմբագրական մասնաժողովը իւր աշխատակից անդամների հետ պարբերաբար ունեցել է գիտական զրոյցներ, կարդացել և քննադատել է այս ժողովներում ընկերութեան հրատարակելիք բոլոր երկերը։ Բացի սրանից ընկերութիւնը կազմակերպել է հրապարակական նիստեր, ուր կարդացուել են հանրամատչելի դասախօսութիւններ։ Բոլոր դասախօսութիւնների մուտքը ձրի է եղել։

Այս դասախօսութիւններից յիշենք մի քանիսը.

Մ. Արեղեան.—1) Գրիգոր Նարեկացի։ — 2) Կարապետ եպ. Տէր Մկրտչեանի գրական գործունէութիւնը։
Ն. Լալայեան.—1) Բաֆֆին և հայ Մելիքութիւնը։ 2) Քարէ դարը Հայաստ. 3) Ուտիներ
Բ. Իշխանեան.—Կովկասի ժողովուրդների տերրիտորիական բաժանումները և պրոֆեսիոնալ-հասարակական կազմը։
Ս. Կանայեան.—Մերձաւոր ամուսնութիւն և բազմակնութիւն քրիստոնեայ Հայաստանում։
Ճերմակ. Ռումանիայի հայերը.
Մ. Վ. Մաքսուտեան. Հայոց հնագոյն քաղաքակրթ. ըստ լեզուի։
Լ. Մելիքսէթ-բէկեան. Հայաղէտ վրացիներ և վրացագէտ հայեր։
Հ. Մուսայէլեան. Համայնական հողատիրութիւնը Անդրկով.
Լէօ.—Վաճառականութեան դերը հայոց քաղաքակրթ. մէջ։
Մ. Խոստիկեան.—1) Յունական փիլիսոփայութ. Հայաստանում։ —2) Գրիգոր Մագիստ. իբրև փիլիսոփայ։
Հ. Յովհաննիսեան. 1 Հայ պատմագիրների պատմա-փիլիսոփայակ. աշխարհայեացքը։
2) Հայերի գաղթականութիւնը։
3) Հայերի յարաբերութ. արևմտեան ազգերի հետ։
Ա. Շահնազարեան. Գ. Սրուանձտեանի գրական գործունէութիւնը։
Ա Քալանթար. Ազգագրական նիւթեր Սունդուկեանի երկերում։

Ընդհանրապէս Կովկասագիտական եւ մասնաւորապէս հայագիտական դասընթացներ երկու սեռի համար. Ընկերութիւնը 1916 թ յունիսի 7-ին դիմեց պատշաճաւոր իշխանութեան և ներկայացնելով խմբագրական մասնաժողովի մշակած ընդհանրապէս կովկասագիտական և մասնաւորապէս հայագիտական դասընթացների կանոնադրութիւնն ու մանրամասն ծրագիրը՝ խնդրեց թոյլատրութիւն, որ երկարատև ձեւականութիւններից յետոյ վերջապէս 1917 թուի մարտի 11 ին թոյլատրեց։ Դասընթացները լինելու են երկսեռ ունկնդիրների համար, բացուելու են Թիֆլիսում և աւանդուելու են հետեւեալ առարկաները. 1) Կովկասի և մասնաւորապէս Հայաստանի աշխարհագրութիւն. 2) Կովկասի և մասնաւորապէս Հայաստանի հնագիտութիւն. 3) Կովկասի պատմութիւնն ու քաղաքակրթութիւն. 4) Հայոց պատմութիւն. 5) Կովկասի ազգերի կրօնների պատմութիւն. 6) Հայոց հին և նոր գրականութեան պատմութիւն. 7) Հայոց ազգագրութիւն. 8) Վրաց ազգագրութիւն. 9) Հայ-վրացական ճարտարապետութիւն. 10) Հայկական բարբառախօսութիւն։

Դասընթացները գրուած են Նորին Սրբութիւն Գէորգ V ամենայն հայոց կաթուղիկոսի բարձր հովանաւորութեան տակ, որից և ստացուած է օրհնութեան կոնդակ։

—

Ընկերութիւնը 1916 թ. մայիսին մասնակցել է Պետրոգրադի առաջին հայկական համագումարին՝ պատգամաւոր ուղարկելով պ. պ. Հ. Մելիքեանին և Ե. Լալայեանին։

Ընկերութեան նիւթական դրութիւնը

Ընկերութիւնը մուտք և ելք է ունեցել.

	մուտք	ելք
1914 թ.	3613 ր. 82 կ.	3472 ր. 30 կ.
1915 թ.	8165 ր. 63 կ.	8722 ր. 75 կ.
1916 թ.	9026 ր. 55 կ.	7530 ր. 55 կ.
	20806 ր.	19725 ր. 60 կ.

Ընկերութեան մուտքը գոյացել է

Մշտական անդամներից 295 ր.+1560 ր.+1540 ր =3395 ր.

Տարեկան անդամներից 174 ր +234 ր. + 333 ր.= 741 ր.

Գրքերի վաճառումից 362 ր. 17 կ.+162 ր. 63 կ.+145 ր. 55 կ.=670 ր.55 կ=670 ր.

Ձեռագրաց ցուցակի բաժ. 515 ր.+925=1440 ր.

Մի օպերային ներկայացումից 1914 թ. 1028 ր. 65 կ.

1916 թ. Ախալքալաքցիների ազգագր. երեկոյթից 108 ր.

Ալէքսանդրապոլցիների ազգ. երեկ. 40 ր.

Նուէրներ եղել են. 1914 թ.

Պ. Ա. Տէր Յակոբեանից «Հայաստ.» աշխ. հրատ.	560 ր.
Իշխ.Պ.Երկայնաբազուկ Արղութեանից 3 մանիկէն շին	180 ր.
Տ. Հ. Մարտիրոսեանից՝ Մարգարիտների Բ. գիրքը հրատարակելու 500 ր. ևս 100 ր. ընդամենը	600 ր.
Պ. Ա. Մելիք-Ազարեանից	200 ր.
Բ. Փոխադարձ Վարկի ընկ.	30 ր.
Թիֆլ. Քաղաքային Վարկի ընկ.	50 ր.
Պ. Հ. Մելիքեանից	120 ր
Ընդամէնը	1740 ր.

1915 թ.

Պ. Հ Մելիքեանից	500 ր.
Տ. Հ. Մարտիրոսեանից «Մարգարիտների» Գ. գ.հրատ.	500 ր.
Պ. Ռ. Մարտիրոսեանից ֆոնոգրաֆ գնելու	100 ր.
Ա. Վաչեանից «Նիւթեր Հայ մելիք.» Բ. պր. հրատ.	200 ր.
Վասպուրականի ձեռագրաց ցուցակի հրատարակութեան համար՝ յատուկ նուէր.	
ա) Եգիպտոսի Հայկ.Բարեգործական Միութիւնից	294 ր.
բ) Պ. Տ. Աֆրիկեանից	300 ր.
գ) Մի անձից	1000 ր.

Հայ փախստականներից բանահիւսութեան վերաբերեալ նիւթեր հաւաքելու համար.

ա) Նպաստամատոյց Ընկ.	1000 ր.
բ) «Մշակի» խմբագրութիւնից	1000 ր.
Ընդամէնը	4894 ր.

1916 թ.

Տ. Ն. Նունուճարեանից ի յիշատակ իւր որդի Գէորգի յատկապէս գրքեր գնելու.	1100 ր.
Էջմիածնի գաւառը ուսումնասիրելու համար՝	
Պ. Ա. Վաչեանից 700 ր. Տ Մ. Ղամբարեանից, ի յիշատակ իւր ամուսնու 200 ր. Մ. Փ.-ից 100 ր. և Տ Ն. Միրզայեանից 50 ռուբլի, ընդամէնը	1050 ր.
Ազգագրական Հանդէսի 26-րդ գիրքը հրատարակելու համար, պ.պ. Ա. Մելիք-Ազարեանից, Հ. Մելիքեանից, Մ. Խունունցից և Կ. Խալաթեանից 300-ական ռուբլի	1200 ր.
Վասպուրականի հայերէն ձեռագրաց ցուցակի II պրակը հրատարակելու, պ. պ. Յ. Շապշնիկեանից և Գէնջօղլեան եղբայրներից	2000 ր.
Հայ փախստականներից հայ բանահիւսութեան վերաբերեալ նիւթեր հաւաքելու՝ ս. Էջմ. Եղբ. օգնութիւնից	1000 ր.
Վասպուրականի ձեռագրների մանրանկարներն արտանկարելու համար պ. Մ. Արամեանից	300 ր.
Վասպուրականի ձեռագրաց ցուցակի համար նուէրներ պ.պ. Մ.Արամեանից, Մ. Աւագեանից, Տ. Մ. Աբեանից, Պ.Ծատուրեանից, Գ. Զիլինգարեանից, Ռ. Մարտիրոսեանից. և Հ. Մելիքեանից 100-ական ռուբլի, ընդամէնը	700 ր.
Տ. Մ. Խարազեանից ի յիշատակ իւր ամուսնու	100 ր.
Պ. Գ. Զիլինգարեանից	100 ր.
Պ. Ա. Ամիրազեանից	50 ր.
Պ. Գ. Տէր Խաչատրեանից	50 ր.
Պ. Յ. Զիւանեանից	25 ր.
Ընդամէնը՝	7675 ր.

Պ. Ա. Մելիք Ազարեան ձրիաբար գրել է ընկերութեան տրամադրութեան տակ իւր տան երեք սենեակներից բաղկացած նկուղը՝ ընկերութ. հրատարակութիւնների պահեստ դարձնելու։

Ընկերութիւնը պարտք է համարում խորին շնորհակալութիւն յայտնել վերոյիշեալ նուիրատուներին։

Ընկերութեան ծախքերը եղել են.

Գրադարան-թանգարանի սենեակների վարձ՝ 1914 թ 840 ր. այնուհետև 960 ր. ընդամէնը 2760 ր.

Գրադարանապետին ռոճիկ 1914 թ. 185 ր. 1915 թ. 271 ր. 1916 թ. 262 ր. ընդամէնը 718 ր.

Էլէքտրական լուսաւորութեան տարեկան 50 ր. ընդ. 150 ր.

Փոստի՝ 67ր. 94 կ.+78ր. 29 կ. և 43ր. 35կ. ընդ.189 ր.58.

Ցայտարարութ. 59 ր. 98+117 ր. 43 կ.+36 ր ընդ.213 ր.	
Դասախօսութ.45 ր.+13ր, 50 կ.+115 ր 10 կ ընդ.173ր. 60.	
Խմբագրաւորների վրայ. 1915 թ. 2000 ր. 1916 թ. 455 ր. և	
1132 ր 85 կ ընդամէնը . . .	3587 ր. 85 կ.
Հրատարակութիւնների վրայ, . .	6554 02
Որից Ազգ. հանդէս 25 գրքի վրայ . .	1100 68
Մարգարիտներ Բ գիրք . .	630
» » Գ գրքի . . .	652 51
Նիւթեր հայ մելիք Բ. պր. . .	219 78
Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի . .	2068 60
Ազգ. Հանդ. 26-րդ գրքի . . .	1323 35
Հայաստանի աշխարհ. . . .	560 —
Թանգարանի վրայ. 220+339 90+349 70 ընդամ.	909 60
Գրադարանի վրայ 55 50,+159, 46+1100 ընդամ.	1314 96
Մանրանկարների	325 —
Պետրոգրադի Համագումարին մասնակցելու	200 —

Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

Աշխատակից անդամներ

1 Ռ. Աբրահամեան
2 Մ. Աբեղեան
3 Ն. Ադոնց
4 Ն. Աղբալեան
5 Հ. Աճառեան
6 Գ. Բաշինջաղեան
7 Լ. Գեանջեցեան
8 Դիոնիսիոս վ. Կալատուղեան
9 Ս. Եղիազարեան
10 Ե. Թադէոսեան
11 Մ. Թերլէմեզեան
12 Թ. Թորամանեան
13 Գ. Իփէկեան
14 Ս. Լիսիցեան
15 Գ. Լեոնեան
16 Խաչիկ ծ. վարդ.
17 Ս. Կանայեան
18 Կ. Կոստանեան
19 Յ. Մանանդեան
20 Մեսրոպ եպիսկոպոս
21 Ս. Մելիքեան
22 Գ. Միրզայեան
23 Գ. ծ. վ. Յովսէփեան
24 Ե. Շահազիզ
25 Ա. Յովհաննիսեան
26 Ա. Շահնազարեան
27 Խ. Սամուէլեան
28 Գ. Սուրէնեան
29 Ս. Տէր Աւետիսեան
30 Ս. Տէր Յակոբեան
31 Գ. Տէր Մկրտչեան
32 Ս. Տիգրանեան
33 Տիրայր վարդ
34 Գ. Ֆեսվաճեան
35 Ա. Լօռու Քալանթար
36. Ռ Մելիքեան

Մշտական անդամներ

1. Ագիգեան Կատարինէ
2. Ալիխանեան Վառվառէ
3. Աղաճանեան Հեղինէ
4. Առաքելեան Գրիգոր *)
5. Աստուածատրեան Գէորգ
6. Աստուածատրեան Միքայէլ
7. Արամեան Արամ
8. Արամեան Սողոմոն
9. Արամեան Թամարա
10. Ալխազեան Եղնիկ քահանայ
11. Աւան-Իւղբաշեան Դաւիթխան
12. Ասֆրիկեան Խաչատուր
13. † Բաբայեան Աւետիք բժ.
14. Բարխուդարեան Արշակ
15. Գառնիկեան Թագուոր
16. Գէորգեան Մամիկոն
17. Գէորգեան Նունէ
18. Դոլուխանեան Նունէ
19. Զարգարեան Արիստակ. բժ.
20. Զարգարեան Աւետիս
21. Զարդեղեան Զաքար քահ.
22. Զաւրեան Իզաբէլլա
23 Էնֆիաճեան Արտաշես
24. Թայիրեան Հռիփսիմէ մայր.
25. Իշխ Թումանեան Մարիամ.
26. Թումանեան Յովհաննէս
27. Թոնեան Արտաշէս
28. Իւզբաշեան Մովսէս
29. Իփակեան Դասպար
30. Լազարեան Մարիամ
31. Լալայեան Երուանդ
32. Լալայեան Հայկանոյշ
33. Խարազեան Սարգիս
34. Խաչատրեան Թեան
35. Խունունց Գայիանէ
36. Խունունց Մնացական
37. Ծատուրեան Եփրեմ
38. † Կարա-Մուրզա Յովսէփ
39. Կարապետեան Յովհաննէս
40. Կոյեալեան Միքայէլ
41. Հայրապետեան Աբիսող. բժ.
42 Կոյս Ղոնեան Հռիփսիմէ
43 Ղորդանեան Ֆլորա
44. Մարտիրոսեան Հայկանոյշ
45. Մարտիրոսեան Ռոստոմ
46. Մարտիրոսեան Ռուբէն
47 Մարտիրոսեան Լեւոն
48: Մամուլեան Զաքարիա
49. Մանուէլեան Ստեփան
50. Մելիքեան Համբարձում
51. Մելիքեան Մարիամ
52. Մելիքեան Մարգարիտ
53. Մելիք-Ազարեան Աղեքսանդր
54. Մելիք-Ազարեան Արփենիկ
55. Մելիք-Կարագեօզեան Արշակ
56. Մելիքսէթբէկեան Լեոն
57. Մեհրաբեան Արամ
58. Մեսնիկեան Գրիգոր
59. Յակոբեան Պետրոս
60. Յակոբեան Մկրտիչ
61. Յարութիւնեան Սամսոն
62. Յովնանջանեան Կարապետ
63. Յովհաննիսեան Շուշանիկ
64. † Նունուֆարեան Սարգիս
65. Նունուֆարեան Նատալիա
66. Նիկողոսեան Մարտիրոս
67. Շիրինեան Կարապետ
68. Շխեան Սիմէօն
69. Զաթալբաշեան Յովակիմ
70. Զիլինգարեան Գեորգ
71. † Պռոշեան Պերճ
72. † Զաղէթեան Աղեքսանդր
73. Սողոմոնեան Սրբուհի
74. Սամուէլեան Խաչատուր
75. † Սրբոչիկեան Վաղարշակ
76. Սիլիկեան Սոփիա
78. Սերեբրիկեան Յովհաննէս
79. Սերեբրիկեան Նունէ
80. Ստեփանեան Յակոբ
81. Վարդազարեան Փիլիպպոս
82. Վարդանեան Մարտիրոս
83. Քալանթարեան Սոփիա
84. Քալանթարեան Յովհաննես
85. Քալանթարեան Մկրտիչ
86. Քարիմեան Համբարձում
87. Տէր Մարգարեան Դասպար
88. Տէր Մարգարեան Շուշանիկ
89. Տէր Յակոբեան Աւետիք
90. Փանեան Աւետիք
91. † Փրիղոնեան Գրիգոր

ԲԱԳԻՒՈՒՄ

92. Ադամեան Յովհաննէս
93. Ադամեան Հեղինէ
94. Ասլանեան Ոսկի
95, Ասլանեան Սամուէլ
96. Անագեան Մանուչար
97. Արամազդ ընկ.
98. Բուղուղեան Աբսէն
99. Գասպարեան Արշաւիր

*) Ընդգծածները վճարել են հարիւրական ռուբլի. միւսները յիսունական։

100. Թորոսեան Սարգիս
101. Թումայեանց Նիկողայոս
102. Թումանեան Արշակ
103. Թումանեան Եղիսաբէթ
104. Թումանեան Մարգարիտ
105. Թումանեան Սոփիա
106. † Թումանեան Քրիստափոր
107. Խաչատրեան Գրիգոր
108. Խոջամիրեան Յակոբ
109. † Ծատուրեան Յովհաննէս
110. Ծատուրեան Շամիլ
112. Ծատուրեան Պատուական
113. Կոստանեան Գեղամ
114 Կրասիլնիկեան Հեղինէ
115. Ղազարեան Աւետիս
116. Մալափեան Կատարինէ
117. Մալափեան Պետրոս
118. Մելիքեան Տիգրան
119. Մելիքեան Նիկտելինու
120. Յակոբեան Վարդուհի
121. Յակոբեան Բաղդասար
122. Շագիտանեան Աւետիս
123. Շագիտանեան Իզաբէլլա
124. Շագիտանեան Մկրտիչ
125. Սարգսեան Եղիսաբէթ
126. Սարգսեան Քրիստափոր
127. Սարուխան Ներսէս
128. Սերոբեան Բագրատ
129. Վաչեան Աստուածատուր
130 † Վաչեան Մարիամ
131. Տէր Բաղդասարեան Արէլ

Գ. ԱԴՈՒԼԻՍՈՒՄ

132. Հախնազարեան Սարգիս
133. Ներսիսեան Աւետիք

Դ. ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒՄ

134 Կամսարական Կարապետ
135. Շաթիրեան Աղէքսանդր

Ե. ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱՈՒՄ

136. Մուրաթեան Յովհաննէս
137. Սանդալեան Եղբայրներ

ԲԱԹՈՒՆՈՒՄ

138 Մերուռնութեանց Միքայէլ

ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ

139. Տէր Գրիգորեան Զալալ
140. Շեխոյեան Յովհաննէս

ԵՐԵՒԱՆՈՒՄ

141. Երևանի թեմ. դպրոց *)

Է. ԵՒՏՈԿԻԱՈՒՄ

142. Շաւարշ Ծ. վ. Սահակեան

Ը. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

143. Գանջեցեան Լևոն
144. Զուլոյեան Աբէստակէս վ.
145. Յովսէփեան Գ. վարդապետ
146. Տէր Ղազարեան Արէլ
147. Արսէն վ. Ղլտչեան

Թ. ԽԵՐՍՈՆՈՒՄ

148. Իշխ. Արղութեան Երկայնաբազուկ Պարէտ

Ժ. ԿԱՐՍՈՒՄ

149. Պապովեան Յովհաննէս

ԿԱՅԻՐԷՈՒՄ

150. Մէօթէմէտեան Արմենակ

ՂԶԼԱՐՈՒՄ

151. Աստուածատուր Բէկ-Յովսէփեան

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

152- Շապշնիկեան Յովհաննէս

ԺԲ. ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

153 Ջամփուլադեան Եսայի
154. Ջամփուլադեան Միքայէլ

ԺԳ. ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

155 Ժամհարեան Նիկողայոս
156 † Շահազիզեան Սմբատ
157 † Պապովեան Եւդոկիա

*) Նուէր Սմբատ Շահազիզից

ՊԵՏՐՈԳՐԱՏՈՒՄ

158 Ասրիբեկեան Աղէքսանդր
159 Գանջեցեան Հայկ
160 Ղուկասեան Պօղոս
161 Ղուկասեան Աբրահամ
162 Ղուկասեան Յակոբ
163 Պապաջանեան Թամարա
164. Պապաջանեան Միքայէլ
165. Պատկանեան Սիրովբէ
166. Սարուխանեան Առաքել
167 Պետրոգրադի Եկատերինա Բ. լեռնային ճեմարանի ուսանողների Հայկական խմբակ

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ

168 Զարխչեան Լևոն

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1916 թ.

169 Տ. Աբովեան Վիկտորիա
170 Աբրահամեան Մարիամ
171 Ալիբեկեան Նունէ
172 Տ. Միրաղեանց
173 Առուանեան Հռիփսիմէ
174 Առուանեան Տիրուհի
175 Արամեան Ստեփան
176 Աւթանդիլեան Հեղինէ
177 Բերբերեան Մինաս
178 Բէկ-Յովսէփեան Աստղիկ
179 Գրիգորեան Թագուհի
180 Գիւզալեան Երանուհի
181 Էլիբեկեան Աստղիկ
182 Էփրիկեան Հռիփսիմէ
183 Թադէոսեան Ռուբէն
184 Իսահակեան Մ.
185 Խալաթեան Մկրտիչ
186 Խախանեան Արծուիկ
187 Խանաղեան Աննա
188 Կալատուզեան Դիոնիսիոս վ.
189 Խալաթեան Կարապետ
190 Հասրաթեան Նուշանիկ
191 Յովհաննէսեան Նունէ
192 Նաւասարդեան Բ. բժ.
193 Շահ-Նազարեան Գրիգոր
194 Շիրինեան Աղաւնի
195 Փաշալեան Աննա
196 Պետրոսեան Արտեմ
197 Պօղոսեան Գէորգ
198 Զամալեան Արշակ
199 Զիվանեան Յովհաննէս
200 Զիվանշիրեան եղբարք
201 Սահակեան Ս. ա. ք.
202 Սարիբէկեան Սինաքսար
203 Սահաթչեան Անահիտ
204 Սաֆարեան Նատալիա
205 Քաջազնունի Մարիամ
206 Հախնազարեան Աւետ
207 Ղարաջեան Մարիամ
208 Ղլիթչեան Սաթենիկ
209 Մարգարեան Հռիփսիմէ
210 Մարգարեան Եղիսաբէթ
211 Մարգարեան Յովհաննէս
212 Մալխասեան Նազիկ
213 Մաղաքեան Զարէլ
214 Մաղաքեան Հայկանոյշ
215 Մաղաքեան Աշխէն
216 Մելիք-Շահնազարեան Լևոն
217 Մեհրաբէկեան Վահան
218 Մեծատունեան Սիրանոյշ
219 Մեծատունեան Գայիանէ
220 Մեհրաբեան Զանազան
221 Մելիք Շահնազարեան Սամուէլ
222 Տ. Միլեան Վասվակ
223 Մինասեան Սոփիա
224 Մինասեան Վահանոյշ
225 Ցարութիւնեան Երանուհի
226 Յովհաննիսեան Գայիանէ
227 Յովհաննիսեան Դշխուհի
228 Սողոմոնեան Սարգիս
229 Սպենդիարեան Յովհաննէս
230 Տէր-Միրաքեան Շուշանիկ
231 Տէր-Գրիգորեան Երանուհի
232 Տէր-Մինասեան Դոխիկ
233 Տէր-Սարգսեան Քրիստափոր
234 Տօնականեան Մարիամ
235 Քանանեան Սրբուհի

6808
2013
NL0002779
ազգային գրադարան
0002779

ՆԱԽԱՀԱՇԻՒ 1917 Թ.

ՄՈՒՏՔ	
17 Մշտական անդամներից	1700
60 տարեկան անդամներից	360
Գրքերի վաճառումից	305
Հանգ. Արգար Անանեանի կտակից	1000
Էջմիածնի Եղբայր. օգն. յանձնաժողովից յատուկ գումար փախստականներին ուսումնասիրելու	1000
Տ. Հ. Մարտիրոսեանից՝ յատուկ գումար Վայոց-Ձորի ալբոմը հրատարակելու	1500
եւ՝ «Մարգարիտների» IV գիրքը հրատ.	500
Տ. Ն. Նունուֆարեանից յատուկ գումար՝ գիրք գն.	100
Շապղնիկեանից և Գէնջ-օղլեաններից ստացուած յատուկ գումար Ջեռագրաց ցուցակը հրատ.	2000
Եղբայրական օգնութ. յանձնաժող. 1916 թ. ստ. գումարի մնացորդը փախստ. նիւթեր հաւաք.	445
Գաւառական մասնաժողովների կազմած Ազգագրական երեկոյթներից	3000
Մի զբօսանքից կամ երեկոյթից.	1000
Նուէրներ	345
Հայագիտակ. դասընթաց. համար յատ. նուէրներ	5000
Տաճկահայոց փախստակ. բանահիւսութեան I պրակի հրատ. համար յատուկ նուէր	500
Ընդամենը	18,755

ԵԼՔ	
I, Հրատարակութիւններ.	
ա. Ազգագրական Հանդէսի XXVII գիրքը	1200
բ. Մարգարիտների IV գիրքը	500
գ. Վայոց-Ձորի ալբոմը	1500
դ. Տաճկահայ փախստ. բանահիւսութեան Ա. գրքի հրատարակութիւն.	500
ե. Վասպուրականի ձեռագրաց ցուցակի Բ. պրակի հրատարակութիւն	2000
զ. Հայերի զգեստների I պր. հրատարակ.	400
II. Խմբագրաց.	
ա. Տաճկահայոց բանահիւսութ. վերաբեր. նիւթեր հաւաքելու և ուսումնասիրութ. կատարելու	1445
բ. Հայոց վանքերը, արձանագրութիւնները և օրնաժեշտները ուսումնաս. լուսանկարելու	1000
III. Թանգարան.	
Ազգագրական հնագիտական իրեր գնելու	3000
IV. Գրադարան.	
Տ. Նունուֆարեանի յատուկ գումարով գրք. գնելու	100
V. Հայագիտական դասընթացների համար	5000
VI. Անհրաժեշտ ծախսեր.	
ա. Թանգարան-գրադարանի սենեակ. վարձ	960
բ. Ելեքտրական լուսաւորութեան	50
գ. Գրադարանապետ-գործավարին ռոճիկ	360
դ. Ծառային ռոճիկ	300
ե. Փոստի ծախս	50
զ. Ցայտարարութիւնների	50
է. Դասախօսութիւնների	300
ը. Տեղեկագրի տպագրութեան	40
Ընդամենը	18,755

Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան
Инвентарный № 7/13 1982